ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 հոկտեմբերի 2013 թվականի N 89-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՆՈՒՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով և հիմք ընդունելով «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Տ.Պետրոսյանի գրավոր դիմումը,**կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2013թ. հոկտեմբերի 3-ից լուծել «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տիգրան Պետրոսյանի հետ 2011 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված N 30 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Տ.Պետրոսյանի անձնական դիմումը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետ:

2. 2013թ. հոկտեմբերի 3-ից «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Գայանե Գրիգորյանին:

Հիմք՝ Գ.Գրիգորյանի անձնական դիմումը:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ասատրյան Նորա	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ)
Կարապետյան Նելլի	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Հարությունյան Գալյա	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
Գրիգորյան Գայանե	«Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող)
Պետրոսյան Տիգրան	«Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող)

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. հոկտեմբերի 2
ք. Կապան